ՃԱՆԱՉԻՐ ՔՈ ԵՐԿԻՐԸ

ԱՐԱՐԱՏ

ԱԼԲՈՄ - ԿԱՏԱԼՈԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

HISTORY MUSEUM OF ARMENIA

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

7(47.925)
Հ-84
Ղ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳԱՆՁԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՑ

ԱՐԱՐԱՏ

6294

Խաչաքար Դվին, VII դար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԱՏՄԱ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՆԱՐԿ

Արարատի մարզը կազմավորվել է ՀՀ ԱԺ-ի 1998թ. դեկտեմբերի 4-ի որոշումով: Մարզի տարածքում ընդգրկված են նախկին Արտաշատի, Արարատի, Մասիսի վարչատարածքային շրջանները՝ շուրջ 2096 քառ. կմ: Մարզի ներկայիս տարածքը զբաղեցնում է պատմական Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ուրծ, Արած, Ոստան գավառները: Երկրամասը հնուց իվեր հանդիսացել է հայ ժողովրդի քաղաքական միավորման, տնտեսական կյանքի և մշակույթի կենտրոնը:

Ք.ա. VIII – IV հազարամյակներում երկրամասը Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործական մշակույթի կարևորագույն կենտրոն էր: Հնագիտական հայտնագործությունները (Մասիս բլուր, Նորաբաց, Ջրահովիտ, Այգավան, Դվին, Արտաշատ) վկայում են նեոլիթ - էնեոլիթյան, բրոնզեդարյան և վաղ երկաթի ժամանակաշրջանի (Ք.ա.VII - I հազ.սկիզբ) Հայկական լեռնաշխարհի առաջնակարգ մշակույթի մասին: Երկրամասի գլխավոր կենտրոններից էր Արարատյան հարթավայրը՝ զարգացած երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով ու արվեստով:

Արարատի մարզի տարածքը եղել է ուրարտական պետության, Երվանդունիների (Ք.ա. 570-201թթ.) և Արտաշեսյանների, (Ք.ա. 189- Ք.հ. 1թթ.), Արշակունիների թագավորությունների (52 - 428 թթ.) կազմում, հանդիսացել է արքունի տիրույթ: IX դարից ենթարկվել է Բագրատունյաց թագավորությանը, ապա՝ Զաքարյանների իշխանապետությանը:

Արարատի մարզի տարածքում են գտնվում Հայաստանի երկու հնագույն մայրաքաղաքները՝ Արտաշատը և Դվինը:



ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
Մարզկենտրոնը՝ ք. Արտաշատ

Համայնապատկեր Դվինի կենտրոնական թաղամասից (V-VIIդդ.)

ԴՎԻՆ

Դվինի բլուրը և նրա մերձակայքը բնակեցված է եղել դեռևս Ք.ա. III հազարամյակից: Ք.ա. I հազ. սկզբին այստեղ եղել է բնակավայր՝ պաշտամունքային կենտրոնով և արտադրական համալիրներով: Դվին քաղաքի պատմությունը սկսվում է IV դարից, երբ Հայոց Արշակունի թագավոր Խոսրով Բ Կոտակը (332 - 338թթ.) Արտաշատից արքունիքը տեղափոխվում է Դվին՝ դարձնելով այն արքայանիստ քաղաք: 428թ. Արշակունիների հարստության անկումից հետո Հայաստանի արևելյան մասում հաստատվում է պարսկական մարզպանություն: Դվինը դառնում է մարզպանության վարչական կենտրոնը և մարզպանի նստավայրը: V դարում Հովհաննես Ա. Մանդակունի կաթողիկոսի (403-490թթ.) օրոք Հայ եկեղեցու կաթողիկոսական աթոռանիստը Վաղարշապատից փոխադրվում է Դվին: Կառուցվում են կաթողիկոսական պալատները, Կաթողիկե Մայր Եկեղեցին (IV դ. վերջ), բարձրագույն հոգևոր դպրոցը և աշխարհիկ բազմաթիվ շինություններ:

Հայաստանի տնտեսական, քաղաքական, մշակութային ու հոգևոր խոշոր կենտրոնի իր դերը Դվինը անընդմեջ պահպանեց մինչև XIIIդ. I քառորդը:



ԱՌՅՈՒԾԻ ԱՐՁԱՆԻԿ

Ներքին Դվին, Ք.ա. XV – XIV դդ., բրոնզ, 127 x 12 x 6,5 սմ

ՀՊԹ № 2982-1

Առյուծի բրոնզաձույլ սնամեջ քանդակ է: Կենդանին կանգնած է հարթակի վրա: Ունի խոշոր գլուխ, թավ բաշ, փոքր, ցցուն ականջներ: Իրանը հարդարված է երկշար եռանկյունաձև կտրվածքներով, երկար պոչը ծայրում ոլորված է:

Առյուծը հնուց ի վեր համարվում էր ուժի, խիզախության, իշխանության գլխավոր խորհրդանշանը, մարմնավորում էր ամռան արևը և կրակի տարերքը:

ԾԻՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՏԱԽՏԱԿ
Դվին, Ք.ա. X – IX դդ., միջնաբերդի ստորին շերտ
կավ, 50,5 x 63,5 սմ
ՀՊԹ № 2846

Կրակի պաշտամունքին նվիրված սրբարաններում տեղադրված նման քանդակազարդ պատկերատախտակները ներկայացնում են Արարատյան հարթավայրի հնագույն բնակիչների հողագործական պաշտամունքների հետ կապված հավատալիքներն ու աստեղային պատկերացումները:

Վերին գոտին սովորաբար հարդարվում էր ցուլի, խոյի գլուխների կամ ցուլի խորհրդանիշ հանդիսացող եղջյուրների ծեփածո պատկերներով: Ցուլը, խոյը, որպես պաշտամունքի առարկա, իրենց արտացոլումն են գտել նաև Դվինի ծիսական անոթների, մանր քանդակների, օջախների վրա՝ իբրև պտղաբերության և արևի խորհրդանիշ:

Ներկայացվող այս պատկերատախտակի վերին շարքում զետեղված են յոթ ոճավորված մարդկային դեմքեր, որոնք համարվում են հեթանոսական պանթեոնի աստվածներ կամ էլ՝ նախնիների պաշտամունքի հետ կապված երկնային համաստեղության նշաններ:

Այս գոտուց ցած կամ նրա մեջ մխրճված՝ զետեղված են ջրեր խորհրդանշող ռելյեֆ կիսակամարները, որոնց մատնեքեններով ալիքավոր մակերեսը, իբրև երկնային օվկիանոսի պատկեր, հնագույն պատկերացումներով տիեզերքի նախասկիզբն է: Կիսակամարների տակ օձի ոլորուն մարմինն է՝ աստեղային նշաններով շրջապատված: Բազմադեմ էր օձի կերպարը հնագույն հավատալիքներում: Իբրև վերին տարերքի մաս, նա մարմնավորում էր երկնային ջրերը, Ծիր Կաթինը, կայծակը: Եվ եթե զիգզագը նույն ամպրոպն էր, ապա իմի էին դառնում երկինքն ու երկիրը, և օձն ինքնին դառնում էր մի շրջան, որն իր մեջ էր առնում երկինքը, երկիրը և անդրաշխարհը:

ԿԱՐԱՍ ՍԵՎԱՓԱՅԼ

Դվին, Ք.ա. X–IX դդ., կավ, 46 x 58 սմ

ՀՊԹ № 2604-1

Կարասի ուսերին տեղադրված են երկու ելուստանման ունկեր: Դրանցից մեկը հարթ է, սկավառակաձև՝ նմանեցրած զոհասեղանի: Իրանի կենտրոնը շրջանակում են ակոսազարդեր ու լայն գոտիներ: Գոտիներից մեկի վրայով սահուն գալարվող ռելյեֆը օձի խորհրդանիշն է: Օձի կերպարը բրոնզեդարյան սիմվոլիկ հորինվածքների բաղկացուցիչ մասն է: Այն հանդիպում է Հայաստանում հայտնաբերված խեցեղենի, գոտիների, զենքերի, զարդերի վրա: Ըստ հնագույն հավատալիքների օձը դիմագրավում էր չարքերին և պարգևում ուժ: Օձին վերագրվում էր անոթի պարունակությունը պահպանելու հատկանիշ: Արդի ժամանակներում Հայաստանի ազգագրական տարբեր տարածաշրջաններում պահպանվել է տնային օձի պաշտամունքը՝ իբրև ապահովության, երջանկության և բարեբերության գրավական:

ԿԱՐԱՍ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ

Դվին, Ք.ա. X - IX դդ., երրորդ սրբարան, կավ, 79 x 79 x 38 սմ

ՀՊԹ № 2121-275

Կարասի ուսերին զետեղված են ցուլի ոճավորված երեք ծեփածո գլուխներ, իսկ գնդաձև իրանը գոտեվորում են գալարվող օձերի բարձրադիր պատկերներ: Վերին գոտու երկու օձերը շրջապատված են աստղանշաններով, որոնք խորհրդանշում են երկնային օվկիանոսը: Դրանից ցած անձրև խորհրդանշող ուղղահայաց գծերով հարդարված գոտին է: Կարասի զարդահարդարման մեջ սիմվոլների նման զուգակցությունը՝ ցուլեր, օձեր, աստեղային նշաններ, հաստատում են անոթի պաշտամունքային նշանակությունը. ցուլը խորհրդանշում էր որոտը և կայծակը, օձը՝ երկնային և երկրային ջրերի աստվածությունը, որպես պտղաբերության հովանավոր և պահապան:

ՍԱՓՈՐ – ԿԱՆԱՑԻԱԿԵՐՊ ԿՈՒՌՔ
Դվին, Ք.ա. X - IX դդ., կավ, 47 x 35 սմ
ՀՊԹ № 2121-286

Անտրոպոմորֆ կուռք է՝ դեպի երկինք ուղղված թևերով և գլխով: Շեշտված կանացի հատկանիշները՝ լայնակոնք իրանը և ստինքանման տասնվեց ուռուցիկ ելուստները, խորհրդանշում են Մայր աստվածությունը: Հին հավատալիքների պատկերագրմանը բնորոշ է կեցվածքը՝ հմայական աղերսով դեպի երկինք կառկառած թևերով: Կուռքը անկասկած կապվում էր բնության զարթոնքի, պտղաբերության, բուսական ու կենդանական աշխարհի բարօրության գաղափարի հետ: Այն իր մեջ կրում է հայոց Անահիտ աստվածուհու պաշտամունքի տարրերը:

ԴԻՄԱՔԱՆԴԱԿ - ԿՈՒՌՔ
Ք.ա. X - IX դդ. Դվին, տուֆ, 56 x 30 x 23 սմ
ՀՊԹ № 3078

Տղամարդու դիմաքանդակ է: Գլխին կրում է սրագագաթ սաղավարտ: Դեմքը օվալաձև է՝ տափակ, քիթը՝ երկար, ուղղանկյունաձև: Հաստ հոնքաղեղների տակ աչքերը նշված են կլոր փոսիկով: Ծոծրակին սաղավարտի փետրափունջը հիշեցնող ուղղահայաց իջնող ռելյեֆ է: Նախնիների պաշտամունքը խորհրդանշող մարդակերպ այպիսի քարե կուռքերը Ք.ա. X - IX դդ. տեղադրվում էին դամբարանների վրա կամ սրբավայրերում:

ԽԱՉԱՔԱՆԴԱԿ

Դվին, VII դար, տուֆ, 206 x 95 x 15 սմ

ՀՊԹ № 3087

Առանձին կանգնած մեմորիալ կոթող է՝ խաչի ծավալային քանդակով: Կերտված է տուֆի ամբողջական սալից: Խաչի թևածայրերը հարդարված են ակնազարդ հիշեցնող զույգ շրջանակներով, կենտրոնում հավանաբար ունեցել է խորաքանդակ մեդալիոնի մեջ առնված ներդիր՝ սրբապատկեր խաչազարդով: Կոթողի հիմքում զետեղված է ծաղկաթերթերով հարդարված սկավառակաձև վարդյակ:

Քրիստոնեությունը ընդունելու սկզբին քրիստոնեականի վերափոխվեցին հեթանոսական որոշ սրբավայրեր, կործանված հեթանոսական մեհյանների տեղում կառուցվեցին տաճարներ՝ կանգնեցնելով նոր հավատի խորհրդանիշ խաչը:

Ագաթանգեղոսի վկայությամբ՝ Սբ Գրիգոր Լուսավորիչը խաչեր է կանգնեցրել Վաղարշապատում՝ Հռիփսիմյանց կույսերի նահատակության վայրում, ճանապարհներին, փողոցներում, հրապարակներում: Քարից խաչեր կերտելու վաղագույն փորձերը վերաբերվում են IV-VII դդ., որոնց լավագույն նմուշները հայտնաբերվել են Դվինից:

ՀԱՐԹԱՔԱՆԴԱԿ՝ ԽԱՂՈՂԱՔԱՂ

Դվին, V - VI դդ., տուֆ, 120 x 65 x 33 սմ

ՀՊԹ № 2604-5

Հարթաքանդակը տաճարի մուտքի բարավորի ձախ կեսն է: Պահպանված սալի աջակողմյան եզրին պատկերված է կենաց ծառ խորհրդանշող, բուսազարդերից բարձրացող խաչի հորիզոնական մեկ թևը: Խաչի հիմքից բարձրացող խաղողի որթագալարները տարածվում են սալի ամբողջ մակերեսով: Խաղողի որթերի միջև երևում են կանացի երկու ֆիգուր՝ գլխաշորով և երկարափեշ հանդերձանքով: Նրանցից մեկը ձախ ուսին կրում է պտուղներով ծանրաբեռնված զամբյուղ, իսկ մյուսը՝ կռացած խաղող է քաղում: Խաղողի որթազարդը հանդիպում է դեռևս IV դ. Արշակունյաց դամբարանի սալերից մեկի վրա, ինչպես նաև Քասախի (IVդ.), Պտղնիի (Ivդ.), Զվարթնոցի (VIIդ.) տաճարների քանդակներում:

6294

ՍԱՓՈՐ
Դվին, XI - XII դդ., միջնաբերդ, կավ, 17 x 15 սմ
ՀՊԹ №1906-230

Ուռուցիկ իրանը հարդարված է բազմաշար գոտիների մեջ առնված, վերից վար իջնող թեք ակոսներով, կանթը՝ տերևաձև վերադիր զարդով: Հարթ նստուկը կրկնահատակ է, սնամեջ. եռանկյունաձև միջանցիկ կտրվածքներով:

ԳՈՏԵԶԱՐԴ ԿԱՐԱՍ
Դվին, X - XI դդ., կավ, 40 x 43 սմ
ՀՊԹ № 1794-500

Կարմիր փայլեցված մակերեսով, լայնաբերան անոթ է: Իրանի կենտրոնը բոլորող գոտին հարդարված է կենաց ծառի և նրա շուրջ կանգնած զույգ թռչունների պարբերաբար կրկնվող պատկերներով: Զարդապատկերի այս մոտիվը լրացվում է գոտուց վեր՝ ոճավորված այծի գաղափարագիրը խորհրդանշող զույգ եռանկյունիներով և խոյակերպ ունկերով: Անոթի զարդահարդարումը խորհրդանշական է՝ կապված պտղաբերության հավատալիքների հետ:

Գոտեզարդ կարասները առանձնահատուկ տեղ են գրավում միջնադարյան Հայաստանի խեցեգործության մեջ: Ունեն ոճավորված կենդանակերպ կանթեր, ներկվում էին կարմիր գույնով, թրծվում, փայլեցվում: Այսպիսի անոթները ծառայել են որպես տոնական սեղանի սպասք՝ գինու և ըմպելիքի համար:

ՊՆԱԿ ՋՆԱՐԱԿԱՊԱՏ
Դվին, XII - XIII դդ., կավ, 18 x 7 սմ
ՀՊԹ № 2048-233

Շրջանաձև, ջնարակապատ պնակ է՝ ուղիղ եզրակողերով, օղակաձև ցածր ոտքով: Պնակի նկարազարդված կենտրոնում զինանշանային հորինվածք է՝ ոճավորված արծվի պատկերով: Թռչունը նստած է թևատարած, գլուխը աջ թեքած: Կտուցը երկար է, կեռ, գլխին կրում է ծաղկանման գլխազարդ: Արծվի պատկերը բոլորված է սրակտուց թռչնագլուխների շարքով: Նկարազարդումն արված է սպիտակավուն հիմքի վրա դարչնագույնի երանգներով և տեղ-տեղ շագանակագույն վրձնահարվածներով:

ՊՆԱԿ ՋՆԱՐԱԿԱՊԱՏ
Դվին, XII - XIII դդ., կավ, 21 x 9 սմ
ՀՊԹ № 1794-314

Ջնարակապատ պնակ է՝ ուղիղ բարձրացող եզրակողերով և օղակաձև ցածր ոտքով: Անոթի ներսում պատկերված է կիսաղեմով կանգնած արագիլ, որի կտուցի մեջ գալարվում է օձը: Վերջինիս պոչը փաթաթված է թռչունի վզին: Ռեալիստորեն ներկայացված է խոշորամարմին, երկարոտն զորեղ թռչնի կերպարը: Փոքր գլխի վրա նշված է աչքը: Ընդգծված է ցցուն կրծքամասը, հզոր թևերը, ոտքերի ճանկերը: Արագիլի թևի վրա պատկերված է շուշանաձաղիկ: Այս հորինվածքի շուրջ երեքական մուգ շագանակագույն կետազարդերից կազմված զարդախմբեր են և ոճավորված բուսական կանաչ զարդաձևեր:

ԱՐՏԱՇԱՏ



Համայնապատկեր Արտաշատի պեղված տարածքից (I - IIդդ.)

ԱՐՏԱՇԱՏ

Արտաշատ մայրաքաղաքը (Ք.ա. II – Ք. հ. IVդդ.) հիմնադրել է Արտաշես Ա թագավորը Ք.ա. 189թ. Արաքս և Մեծամոր գետերի հին հուների միախառնման տեղում: Պլուտարքոսի վկայությամբ «... կառուցվեց մեծ ու խիստ գեղեցիկ քաղաք, որը կոչվեց թագավորի անունով և հռչակվեց Հայաստանի մայրաքաղաք»:

Հռոմեական պատմագրությունը տեղի ընտրությունը և հատակագծումը վերագրում է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալին: Քաղաքի մեծությունն ու գեղեցկությունը վկայել են Ստրաբոնը, Ապպիանոսը, Տակիտոսը, Մովսես Խորենացին: Հռոմեական զորավար Լուկուլլոսը այն համարում էր Հռոմին ընդդիմադիր երկրի կենտրոն՝ կոչելով "Հայկական Կարթագեն":

Արտաշատը Հեռավոր Արևելքից դեպի Միջերկրականի ափերը և հյուսիսից հարավ ձգվող ճանապարհների հանգուցակետն էր: Քաղաքը հռչակված էր որպես տարանցիկ ապրանքների պահեստավայր և առևտրական փոխանակությունների կենտրոն:

Քաղաքն ավելի քան 500 տարի պահպանեց Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային և հոգևոր կենտրոնի իր նշանակությունը: Արտաշատ քաղաքի բլուրներից մեկի վրա է գտնվում Խոր Վիրապի վանքը:

ՏԱՃԱՐԻ ՍՅԱՆ ԽՈՅԱԿ ԵՎ ԽԱՐԻՍԽ
Արտաշատ, I դար, կրաքար
Հայաստանի պատմության թանգարան

ԱՐՁԱՆ՝ "ԱՖՐՈԴԻՏԵ"
Արտաշատ, Ք.ա. II - I դդ., մարմար, 58 x 21 x 15սմ
ՀՊԹ № 2706-37

Ցածր պատվանդանին կանգնած կնոջ ծավալային քանդակ է (պակասում է գլուխը, աջ թևը և ձախ ձեռքի դաստակը): Հագին կրում է նուրբ խիտոն, որը բարակ գոտիով պիրկ կապված է կրծքի տակ և ցած է սահել՝ մերկացնելով ձախ ուսը: Վրայից ձգած ծածկոցը, պարուրելով մարմինը, ծանր ու շքեղ ծալքերով իջնում է պատվանդանին: Իրանի վերին մասում թեթևակի ձախ հակված կնոջ կեցվածքը՝ վեր բարձրացրած աջ ուսով, թեթև ծալված աջ ոտքով, հագուստի ծալքերի գծով քանդակին հաղորդում են նրբագեղություն և սեթևեթ նազանք, ինչը բնորոշ է Աֆրոդիտե աստվածուհու արձաններին: Արձանը Հայաստանում հայտնաբերված ուշ հելլենիստական ժամանակաշրջանի բարձրարվեստ ստեղծագործություն է: Ուսումնասիրողների կարծիքով արձանը Պրաքսիտելի կամ նրա դասական դպրոցի նրբին և շքեղ կերպարների վերարտադրությունն է:

ԱՆՈԹԻ ԿԱՆԹ՝ ԷՐՈՍԻ ՔԱՆԴԱԿՈՎ
Արտաշատ, Ք.ա. II-I դդ., I բլուր
արծաթ՝ ոսկեզօծ, 9,6 x 4,6 x 3,6 սմ
ՀՊԹ № 2940-41

Անոթի կանթ է՝ սիրո աստված Էրոսի՝ լոտոսի ծաղկից ելնող թևավոր, մերկանդամ մանչուկի քանդակով: Ոտքերը խրված են ծաղկաթերթերի մեջ, երկու ձեռքով կրծքին է սեղմել խաղողի ողկույզը: Վարպետությամբ վերարտադրված է համաչափ մարմնակազմվածքով, գիրուկ կլոր դեմքով, լիքը շուրթերով գանգրահեր մանկան ճշմարտացի կերպարը: Կանթը ավարտվում է ականթատերևներով: Ամրացված է եղել անոթի իրանին ուղղահայաց դիրքով:

ԱՆՈԹԻ ԿԱՆԹ՝ ԾՈՎԱՁԻՈՒԿԻ ՔԱՆԴԱԿՈՎ
Արտաշատ, Ք.ա.II - I դդ., I բլուր
արծաթ՝ ոսկեզօծ, 13,5 x 5 x 3,4 սմ
ՀՊԹ № 2940-55

Անոթի շարժական կանթ է: Առասպելական ծովաձիուկը համարվում էր ծովային աստվածությունների փոխադրամիջոցը: Երևակայական կենդանին պատկերված է տափակ, աղեղնաձև ճկած մարմնով, որի մի ծայրում ձիու գլուխն է, մյուսում ձկան պոչը: Մարմինը պատված է ձկան թեփուկները նմանակող փորագիր զարդանախշով: Անոթի իրանի վրա կանթը տեղադրված է եղել հորիզոնական դիրքով:

ՊՆԱԿ՝ ԱՐԱՄԵԵՐԵՆ ԳՐՈՒԹՅԱՄԲ
Արտաշատ, Ք.ա.II-I դդ., լազուրիտ, ոսկի, 19x2,7 սմ
ՀՊԹ № 2940-1

Սկավառակաձև ծանծաղ պնակ է՝ եզերված դեպի դուրս փռված լայն շրթնապսակով: Շրթնապսակի կենտրոնով անցնում է փորագիր գոտի, որի վրա հավասար հեռավորությամբ փորված են անցքեր: Անցքերից երեքի մեջ պահպանվել են մեխված կիսագնդաձև գլխիկով ոսկյա գամեր: Նստուկը ձևավորված է համակենտրոն ռելյեֆ գոտիներով: Ափսեի եզրին՝ դրսից, փորագրված է մեկ տողանոց արամեերեն արձանագրություն: Արձանագրությունը թերի է, անընթեռնելի:

ԱՐՁԱՆԻԿ՝ ՍԻԼԵՆ
Արտաշատ, I դար, VIII բլուր, տերրակոտա, 9,3 x 10,2 x 5,6 սմ
ՀՊԹ № 2947-151

Ըստ հին հունական դիցաբանության Սիլենը Դիոնիսիոսի դաստիարակն էր և տոնախմբություններին նրա մշտական ուղեկիցը: Արձանիկը պատկերում է նստած ծերունու: Գլխի մազերը խնամքով հարդարված են: Այտուցված դեմքը ծածկված է փարթամ բեղ ու մորուքով: Կիսամերկ է, ուսերը ծածկված է թիկնոցով, աջ թևով հենված է իրենից անբաժան գինու տճկորին: Ռեալիստորեն վերարտադրված են ծերունական մարմնի մանրամասները՝ փոքր ինչ ուռած որովայնը, կախված մկանները: Արձանիկը պատրաստված է կաղապարով, անգոբապատ է:

ԴԻՄԱԿ
Ք.ա. I - Ք.հ. I դդ., Արտաշատ, բրոնզ, 2,8 x 4,3 x 2,1սմ
ՀՊԹ № 3033-1

Ստրուկներին վերագրվող թատերական գրոտեսկային դիմակ է: Աչքերը խոշոր են՝ դուրս պրծած խնձորակներով: Հաստ հոնքերը դեմքին տալիս են ցասկոտ արտահայտություն: Քիթը՝ քթարմատում խորը ներս է ընկած: Ծովախեցի հիշեցնող լայն բացված մեծ բերանը կերպարին տալիս է անիրական և ֆանտաստիկ արտահայտություն: Խիտ, խնամքով ետ սանրած մազերը ծայրերում ավարտվում են երեքական հյուսքերով:

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔ
V դ., գյուղ Լուսառատ

Հայ ժողովրդի նվիրական սրբավայրից է Խոր Վիրապի վանքը: Նրա պատմությունը սերտորեն առնչվում է Հայաստանում քրիստոնեության ընդունման և հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի ու Տրդատ Գ Մեծ արքայի հետ: Ագաթանգեղոսի վկայությամբ՝ Եկեղյաց գավառի Երիզա ավանում Գրիգորը հրաժարվում է պսակներ ու ծառերի թավ ճյուղեր նվիրաբերել Անահիտ դիցուհու բագինին, արժանանալով Տրդատ արքայի ցասմանը: Եվ երբ երկարատև հարցապնդումները, խոշտանգումներն ու անարգանքները ապարդյուն են դառնում, հեթանոս արքան հրամայում է Գրիգոր Լուսավորչին նետել Արտաշատի արքունի բանտի մահվան դատապարտվածների գուբը՝ որը հայտնի էր «Վիրապ Արտաշատու» անվանումով: Այդ վիրապում՝թունավոր զեռունների հարևանությամբ, նա մնաց տասներեք տարի:

V դարում Խոր Վիրապի տեղում հիմնադրվում է վանք և հաստատվում է միաբանություն: 642թ. Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը կառուցում է Սբ Գևորգ եկեղեցին: VIII դարից Խոր Վիրապի վանքը դառնում է համազգային սրբավայր, կրթության և գիտության հանրահայտ կենտրոն:

Տեքստերը՝ Լյուդվիգ Խաչատրյան
Գոհար Խաչատրյան

Լուսանկարները՝ Վռամ Հակոբյան

ԵՐԵՎԱՆ 2018

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ